

ԱՐՔԱՅԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՐԳՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ
ՕՐԻՆԱԿ ԱՍՍՈՒՐԱ-ՈՒՐԱՐՏԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՌՈՒՍԼԱՆ ՑԱԿԱՆՅԱՆ

Բանալի բառեր՝ *Իրավահավասարություն, աստված, տեր, ծառա, եղբայր, որդի, Եզիպոս, Խաթթի, Միտրանի, Ասորեստան, Ուրարտու:*

Ներածություն

Մ.թ.ա. VII դարի ուրարտա-ասորեստանյան հարաբերությունների մասին պատմագիտությանը շատ քիչ բան է հայտնի: Ասորեստանյան հետախուզական բնույթի տեքստերի, մասամբ նաև վիմագիր արձանագրությունների սուղ տվյալների քննության միջոցով վաղուց ցույց է տրվել, որ մ.թ.ա. VII դարի երկրորդ կեսին ասսուրա-ուրարտական հարաբերություններում կատարվել է կտրուկ շրջադարձ հոգուտ Ասորեստանի:

Երկու ախոյան երկրների ուժերի հարաբերակցության փոփոխությունն անմիջականորեն արտացոլվել է նաև դրանց տիրակալների պաշտոնական փոխհարաբերությունների բնույթի ու բովանդակության վրա: Անուղղակիորեն՝ այդ շրջադարձն իր արտացոլումն է գտել Ասորեստանի արքա Աշշուրբանիպալի (մ.թ.ա. 669-627 թթ.) «Տարեգրության» (*Ռասսամի գլան*) մեջ¹:

«Տարեգրության» մեջ Աշշուրբանիպալը նշում է, որ ուրարտական արքայից պատվիրակության միջոցով «*ծանր ընծաներ*» է ստացել և, որ արքան այդ ամենը կատարել է «*պատրկատանքով ու հնազանդությամբ*»: Համաձայն Աշշուր-

¹ **Borger** 1996: 71f., 250, A X, ll. 40-50; **Luckenbill** 1927: § 834; **Streck** 1916: Cylinder A, Col. X, l. 40, 85.

բանիպալի «Տարեգրության»՝ ուրարտական առաքելությունը տեղի է ունեցել Շամաշ/Նաբու-դանինաննիի էպոնիմատի տարում²: Մասնագիտական գրականության մեջ այն տատանվում է մ.թ.ա. 647/646-638/637 թթ. միջև³, իսկ ուսումնասիրողներից ոմանց կարծիքով՝ համապատասխանում է մ.թ.ա. 643/642 թ.⁴:

Պետք է արձանագրել նաև, որ «Տարեգրության» վկայությունն անուղղակի է, քանզի խոսքը վերաբերում է միայն Ասորեստանի արքային Ուրարտուի արքա Սարդուրի III (կամ IV)-ի պաշտոնական դիմելաձևի փոփոխությանը: Դրա հնարավոր քաղաքական ենթատեքստի բացահայտման նպատակով «Տարեգրության» մեջ նշված եզրույթները դիտարկել ենք Հին Մերձավոր Արևելքի երկրների դիվանագիտական հարաբերություններում դրսևորված էթիկետի, մասնավորապես՝ ինքնիշխան և հպատակ արքաների փոխադարձ դիմելաձևի համեմատական դաշտում:

«Տարեգրության» խնդրո առարկա հատվածը.

«Տարեգրության» մեզ հետաքրքրող հատվածում Ասորեստանի արքան հայտնում է.

- «40. Իշթար-դուրին՝ Ուրարտուի արքան,
- 41. որի արքա-հայրերն արքաներին՝ իմ հայրերին,
- 42. դիմում էին իբրև «եղբայր»,
- 43. այժմ արդեն Իշթար-դուրին լսելով իմ զորության և գործերի մասին,

² Frame 1982: 157ff.; Brinkman 1984: 107f.

³ Ադոնց 1972, 143-144; Арутюнян 1970: 330; Арутюнян 1976: 98-114; Salvini 1995: 111; Salvini 2007: 158; Reade 1998: 256f.; Roaf 2010: 76ff.

⁴ Grayson 1981: 231, 235; Na'aman 1991: 254; Fuchs 2012: 137-138, 144-145, 149; Hellwag 2012: 228; Գրեկյան 2008, 301:

44. որ աստվածները բաժին էին հանել ինձ որպես ճակատագիր,
45. (և) **ինչպես որդին է հորը դիմում** որպես իր «**տիրոջ**»,
 46-47. այդպես էլ նա, այսուհետև, սկսեց մշտապես գրել՝
 48. «**արքային՝ տիրոջս**»:
 49-50. Պատկանանքով և հնազանդությամբ նա բերում է այստեղ իր ծանր ընծաները⁵:

Աշուրբանիպալի «Տարեգրության» համաձայն՝ դեսպանություն ուղարկող ուրարտական արքան եղել է Իշտար-դուրին/*Իսասարդուրին*/Սարդուրին (Սարդուրի (IV(?)) Ռուսարդու(?), Սարդուրորդու(?)) (մ.թ.ա. 645-635(?) թթ.⁶): Աշուրբանիպալը հպարտությամբ է փաստում ասուրա-ուրարտական հարաբերություններում տեղի ունեցած տեղաշարժը և հատկապես, որ ի տարբերություն նախկինի, երբ ուրարտական թագավորներն իր նախնիներին եղբայրական ողջուններ էին ուղարկում, Սարդուրիին՝ «*kîma ša mâru ana abûšu*»՝ «ինչպես որդին իր հորը», գրում է՝ «*lu šulmu-mu ana šarri bēliya*»՝ «Ողջուն՝ թագավորին՝ իմ տիրոջը» և ուղարկում նվերներ:

Աշուրբանիպալի «Տարեգրության» քննության առարկա հատվածը հետաքրքիր է ոչ միայն նրանով, որ այնտեղ հիշատակվում է Ասորեստանի և Բիայնիլիի նախորդ արքաների միջև նամակագրական կապի վերաբերյալ, այլև նրանով, անմիջականորեն խոսում է երկու երկրների արքաների պաշտոնական հարաբերություններում կատարված կտրուկ բեկման մասին:

⁵ «Տարեգրության» համապատասխան տողերի հայերեն թարգմանության համար տե՛ս **Գրեկյան** 2008, 301, ինչպես նաև՝ **Borger** 1996: 71f., 250, A X, II. 40-50; **Luckenbill** 1927: § 834.

⁶ **Յականյան** 2018, 250:

Վերոշարադրյալը վկայում է, որ Աշտուրբանիպալի նախորդներն իսկապես նամակագրական կապ են ունեցել Ուրարտուի արքաների հետ, և նրանց միջև կապը եղել է հավասարը հավասարին սկզբունքով՝ ինչպես *եղբայրը եղբորը*:

Դեռ ավելին՝ կարելի է ենթադրել, որ Աշտուրբանիպալն էլ իր հերթին, նամակագրական կապ է ունեցել Սարդուրիի հետ: Դեռևս, 1951 թվականին իր «Ասսուրա-բաբելական աղբյուրները Ուրարտուի պատմության վերաբերյալ» աշխատանքում՝ Ի. Մ. Դյակոնովը նույնպես չի բացառում նմանատիպ հնարավորությունը: Հայտնի ABL, № 1242⁷ նամակը, Ի. Մ. Դյակոնովը վերնագրել է որպես «Աշտուրբանիպալի նամակը Սարդուրի III-ին՝ Ուրարտուի արքային»⁸:

Այսպիսով՝ ABL № 1242 նամակի առաջին տողերը կարելի է վերականգնել՝

- «1. [Նամակն Աշտուրբանիպալի, արքայի]՝ Աշտուր (Ասորեստան) երկրի
2. [Իշխարդուրիին՝ արքային Ուրարտու երկրի՝ **իր որդուն**
3. [Պալապն ի]մ և ամբողջ Ասորեստանում ամեն ինչ լավ է,
4. [Թող որ ամեն ինչ լավ լինի] քո պալատում ու երկրում»⁹:

Աշտուրբանիպալի «Տարեգրության» վերոնշյալ հատվածից պարզորոշ երևում է, որ գործ ունենք Ուրարտուի պատմության մեջ անչափ շրջադարձային իրողության՝ քաղաքական ինքնիշխանության կամավոր զոհաբերության փաստի հետ: Հայտնի է, որ վեհապետ-վասալներ ուղղաձիգ հարաբերությունները սովորաբար ձևավորվում էին գերազանցա-

⁷ Harper 1913: № 1242.

⁸ Дьяконов 1951: № 79; նույն կարծիքին է նաև Գ. Բ. Լանֆրանկին (Lanfranchi 2009: 138; հմմտ. նաև՝ Waterman 1930: № 1242.

⁹ Pappola 2018: № 78.

պես ուժի և հարկադրանքի միջոցով¹⁰: Սակայն մինչ օրս հայտնի չէ որևէ մի աղբյուրագիտական տվյալ, որը կվկայեր ուրարտական առաքելությանը նախորդած ժամանակահատվածում Ուրարտուի դեմ Ասորեստանի հաղթական պատերազմի կամ հաջողված քաղաքական հարկադրանքի մասին: Այդ իսկ պատճառով մասնագետները մինչ օրս խիստ տարակարծիք են ասսուրա-ուրարտական հարաբերությունների համապատկերում Սարգուրիի վերոնշյալ դեսպանության նպատակների հարցում¹¹: Այդուհանդերձ, ուրարտական արքայի կողմից Ասորեստանի տիրակալին դիմելաձևի փոփոխության մասին Աշշուրբանիպալի «Տարեգրության» հաղորդումը հազիվ թե կարելի է վերջինիս փառամոլությանը բացատրել, քանի որ նրանում գործածված եզրույթները, մեր խորին համոզմամբ, հստակ քաղաքական ենթատեքստ են պարունակում և ակնարկում են երկու երկրների հարաբերությունների հիմնային մակարդակում կատարված ինչ-որ փոփոխության մասին:

Խնդրի վերաբերյալ հնչեցված կարծիքների մեջ, թերևս ամենաուշագրավը՝ Ե. Գրեկյանինն է, ըստ որի, Աշշուրբանիպալը կարող էր լինել Սարգուրիի աներհայրը: Նա նշում է, որ վերոհիշյալ փաստը կարող է վկայել ոչ միայն ասորեստանյան ազդեցության, այլև երկու արքայատների միջև տեղ գտած դինաստիական հնարավոր կապի մասին: Սարգուրին, Աշշուրբանիպալին դիմելով որպես իր «հոր», հնարավոր է՝ նկատի ուներ իր աներհորը¹²: Հետևաբար, ինչպես ենթադրում է Ե. Գրեկյանը՝ կարող ենք ենթադրել, որ ուրարտական թագուհիներից առնվազն մեկը ասորեստանյան արքա Աշշուրբանապալի դուստրն էր: Այս դինաս-

¹⁰ Մելիքյան 2016, 69-81:

¹¹ Ադոնց 1972, 43-144; Меликишвили 1954: 318; Арутюнян 1970: 330-331, և այլք:

¹² Գրեկյան 2013, 94:

տիական ամուսնությունն ամենայն հավանականությամբ հետապնդում էր քաղաքական նպատակներ՝ ամրապնդելու ասորեստանյան ազդեցությունը Ուրարտուում¹³:

Տեսականորեն՝ Ե. Գրեկյանի վարկածը միանգամայն հիմնավոր է թվում: Այն, որ երկու արքայատների միջև դինաստիական ամուսնության երևույթը կարող էր տեղ գտնել՝ չենք բացառում: Այս դեպքում ուրարտական արքան, իսկապես, Աշշուրբանիպալին կարող էր դիմել իբրև «հոր»:

Այդուհանդերձ, Աշշուրբանիպալի «Տարեգրության» քննարկվող հատվածում, մասնավորապես նրա 44-50 տողերում առկա ձևակերպումների պատշաճ կարևորումը վերոնշյալ վարկածի դեմ հարուցում է սկզբունքային առարկություններ: Նախ՝ «Տարեգրության» մեջ Ասորեստանի արքային Սարդուրիի երկու դիմելաձևերի միջև իբրև ջրբաժան հիշատակվում է ոչ թե դինաստիական ամուսնությունը, այլ Ասորեստանի արքայի «...գորությունն ու աստվածների կողմից որպես ճակատագիր բաժին հանված գործերը»: Բացի այդ, հարկ է ուշադրություն դարձնել նաև Աշշուրբանիպալի նշած համեմատության վրա. «...**ինչպես որդին է հորը դիմում որպես իր «պիրոջ», այդպես էլ նա, այսուհետև, սկսեց մշտապես գրել՝ «արքային՝ պիրոջս»:**

Նախադասության առաջին մասում, ինչպես տեսնում ենք, ուրվագծվում է ընտանիքի (նահապետական ընտանիքի) մոդելը, որտեղ հայրը հեղինակության և նույնիսկ տիրության իրավունք ունի որդու նկատմամբ: Բայց այս տեսանկյունից աներևակայելի է, որ մի տերության արքան ընդամենը դինաստիական ամուսնության հողի վրա ընդունել իր աներիոր՝ մյուս երկրի արքայի հայրական գերագահությունը:

Վերոնշյալի լույսի ներքո մենք հակված ենք Աշշուրբա-

¹³ Գրեկյան 2008, 303:

նիպալի «Տարեգրության» մեջ Ուրարտուի արքա Սարգուրիի կողմից «*տեր*» դիմելաձևի մեջ ոչ թե մեծարանք, այլ բացառապես քաղաքական իմաստ տեսնելուն: Դեռ ավելին՝ «*այժմ արդեն*», արտահայտություն էլ իր հերթին վկայում է մինչ արձանագրության ստեղծումն ընկած ժամանակահատվածի ինչ-որ պահից հետո տեղի ունեցած կոնկրետ շրջադարձային փոփոխության մասին: Ըստ այդմ էլ, մենք հակված ենք՝ Աշշուրբանիպալի «Տարեգրության» վերոնշյալ հատվածում տեսնելու **ասսուրա-ուրարտական հորիզոնական հարաբերությունները ուղղաձիգ հարաբերություններով փոխարինվելու իրողությունը:**

Հարկ ենք համարում Աշշուրբանիպալի «Տարեգրության» վերոնշյալ հատվածում հիշատակված «*եղբայրը եղբորը*» և «*որդին հորը*» դիմելաձևերը քննության առնել Հին Մերձավոր Արևելքի երկրների միջպետական հարաբերություններում դրանց կիրառության համեմատական մեթոդաբանության հիման վրա:

«Եղբայրը-եղբորը»

Հին Մերձավոր Արևելքի երկրների դիվանագիտական հարաբերությունների ծիսական, իրավական և էթիկետային կողմերը վաղուց են դարձել գիտական մանրագնին հետազոտության առարկա: Տարաբնույթ վավերագրերի քննության միջոցով հնարավոր է պատկերացում կազմել նաև տարբեր երկրների արքաների միջև դիվանագիտական էթիկետի ու քաղաքական աստիճանակարգության մասին:

Ընտանեկան հարաբերությունների հայեցակարգի եզրույթաբանությունը մեծ նշանակություն ունեւ Հին մերձավորարևելյան երկրների դիվանագիտական ու պալատական հարաբերություններում: Ընտանիքի գաղափարը գործում էր ոչ միայն երկու արքաների, այլև նրանց ընտանիքի այլ անդամների միջև տեղ գտած նամակագրություններում:

Նմանատիպ օրինակները բազմաթիվ են: Այսպես,

օրինակ, Ռամզես II-ի (մ.թ.ա. 1279-1213 թթ.) որդին՝ Սուբահափշափը, Խաթթի արքա Խաթուսիլիսի III-ին (մ.թ.ա. մոտ 1266-1236 թթ.) դիմում է որպես «հոր»՝

«§1 (Դկ. 1-2) [Այսպես է ասում] Սուբահափշափ, որդին Մեծ արքայի, Եգիպտոսի արքայի

§2 (Դկ. 3-4) Ասա Խաթթուսիլիսին՝ Մեծ արքային, Խաթթի արքային՝ **հորս**:

§3 (Դկ. 5-7) Թող որ դուք, Մեծ արքադ, Խաթթի արքան, **իմ [հայրը]**, լավ լինի, և թող ձեր [երկիրը] լավ լինի:

§4 (Դկ. 8-10) [Հիմա ես, **քո որդին**], լավ եմ և [երկիրը] Մեծ արքայի, Եգիպտոսի արքայի, **քո եղբոր**՝ լավ է»¹⁴:

Նույն Ռամզես II-ը Խաթթի արքայազն Թաշմի-Շարրումային դիմում է որպես «որդու»՝

«§2 (5-6) [Ասա] Թաշմի-Շարրումային՝ **իմ որդուն**: §3 (7-8) Թող որ դու, որդին Խաթթի Մեծ արքայի՝ **իմ եղբոր**, լավ լինես»¹⁵:

Բերենք ևս մի օրինակ որտեղ Խաթթի արքայազն Ցիտան դիմում է Եգիպտոսի փարավոնին՝

«1. Ասա Տիրոջը, Եգիպտոսի արքային, 2. **իմ հորը**, 3. Այսպես է ասում Ցիտան, արքայազնը՝ 4. **քո որդին**, 5. Տիրոջս ու **հորս հետ**՝ 6. թող ամեն ինչ լավ լինի»¹⁶:

Ըստ Հ. Ա. Հոֆֆների, նամակում Ցիտան ընդգծված հարգանքով է վերաբերվում փարավոնին¹⁷: Սակայն նա փարավոնին դիմում է որպես «հայր», ոչ միայն այն պատճառով, որ փարավոնը եղել է տարիքով ավելի մեծ, այլ նաև այն պատճառով, որ Ցիտան արքա չէր, այլ՝ արքայազն (DUMU.LUGAL):

¹⁴ Beckman 1996: № 22A, §§ 1-2.

¹⁵ Նույն տեղում, № 22C, §§ 1-2.

¹⁶ Mynářová 2007, EA № 44 198; Moran 1992, EA № 44; Hoffner 2009, № 97.

¹⁷ Hoffner 2009, 281.

Երկու իրավահավասար արքաների միջև նույն դիմելաձևը հանդես էր գալիս «*եղբայրության*» սկզբունքով¹⁸: Վերջինիս վառ վկայությունը կարող է հանդիսանալ Մուրսիլիս III-ի (մ.թ.ա. մոտ 1275-1267 թթ.) մի վկայությունը, որտեղ խոսվում է նրա կարգավիճակի փոփոխության մասին: Խաթթիի գահին բազմելուց անմիջապես հետո նա հայտարարում է՝

«... *հիմա ես Խաթթիի արքան եմ, այլ ոչ թե Ուրխի-Թեշշուբը*»¹⁹:

Այստեղ ակնհայտ է, որ Մուրսիլիս III-ն ավանդույթի ուժով, որպես Խաթթիի մեծ արքա՝ պետք է պահանջեր, որպեսզի իրեն դիմեն որպես իրավահավասար արքայի:

Թել-էլ-Ամարնայի արխիվից մենք ունենք «*եղբայրը-եղբորը*» փոխադարձ դիմելաձևի բազում դեպքեր: Այսպես, Եգիպտոսի փարավոն Ամենհոտեպ III-ը (մ.թ.ա. 1390-1352 թթ.) գրում է Բաբելոնի արքա Կադաշման-Էնլիլ I-ին (մ.թ.ա. 1374-1360 թթ.)՝

- «1. *Կադաշման-Էնլիլ[ի]ին, Կարադուն[ի]շեի (Բաբելոնի - Ռ.Ց.) արքային՝*
2. *իմ եղբորը, խոսքն այս [ասում է] Նիբմուստեան (Ամենհոտեպ III - Ռ.Ց.), Մեծ արքան,*
3. *Միծրիի (Եգիպտոսի - Ռ.Ց.) արքան, քո եղբայրը՝ ինձ մոտ ամեն ինչ լավ է»*²⁰:

Նույն կերպ, Եգիպտոսի փարավոն Ամենհոտեպ III-ին որպես «*եղբայր*» է դիմում նաև Կադաշման-Էնլիլ I-ի հաջորդ Բուրնա-Բուրիաշ II-ը (մ.թ.ա. 1359-1333 թթ.)

¹⁸ Bryce 2003, 74.

¹⁹ Նույն տեղում, 84.

²⁰ Mynářová 2007, EA №№ 1- 2; Moran 1992, EA №№ 1- 2.

- «1. Նապիտուրիային՝
 2. Եգիպտոսի արքային՝ **իմ եղբորը**, խոսքն
 3. այսպես [ասում է] Բուրնա-Բուրիաշը, Կարդունիաշի արքան,
 4. **քո եղբայրը՝** ինձ մոտ ամեն ինչ լավ է»²¹:

Եգիպտոսի փարավոնին Ամենհոտեպ IV-ին (մ.թ.ա. 1352-1336 թթ.) նույն կերպ է գրում նաև Խաթթիի արքա Սուպպիլուլիումաս I-ինը (մ.թ.ա. 1345-1322 թթ.)՝

«1. [Այսպես է ասում Արևս]՝ Շուպպիլուլիուման, Մ[եծ] արքան, 2. [արքան Խաթթի]թի. Ասա Խուրիային²² 3. Միծրիի [արքային]՝ **իմ եղբորը**»²³:

Նույն կերպ էին իրար դիմում Եգիպտոսի փարավոն Ռամզես II-ն ու Խաթթիի արքա Խաթթուսիլիս III-ը²⁴, Խաթթուսիլիս III-ն ու Բաբելոնիայի արքա Կադաշման-Էնլիլ III-ը²⁵, Խաթթիի և Միտտանիի արքաները, և այլն:

Հետաքրքիր է նաև Ալաշայի (Կիպրոս կղզի - Ռ.Ց.) արքայի նամակը Ամենհոտեպ IV-ին, որտեղ արքաները հանդես են գալիս որպես իրավահավասար կողմեր՝ միմյանց «եղբայր» անվանելով՝

«1. Եգիպտոսի արքային՝ **իմ եղբորը**

²¹ Mynářová 2007: EA №№ 7-11; Moran 1992: EA №№ 7-11.

²² Հստակ չէ, թե կոնկրետ որ փարավոնի մասին է խոսքը: Այն կարող էր հասցեագրված լինել թե՛ Ամենհոտեպ IV (մ.թ.ա. 1352-1336 թթ.), և թե՛ Թութանհամոնին (մ.թ.ա. 1336-1327 թթ.)՝ Moran 1992:115, n. 2.

²³ Mynářová 2007: EA № 41, p. 197; Moran 1992: EA № 41; Hoffner 2009: № 96.

²⁴ Beckman 1996: № 15, § 1; № 22C; № 22G.

²⁵ Beckman 1996: № 23; Oppenheim 1967: 139f.

2. Այսպես է ասում Ալաշիայի արքան՝ **քո եղբայրը**»²⁶.

Խաթաթի, Բաբելոնիայի ու Միտտանիի արքաներից ետ չէր մնում նաև Ասորեստանի արքա Աշշուր-ուբալլիտ I-ը (մ.թ.ա. 1354-1318 թթ.), որի կառավարման ընթացքում Ասորեստանը ոչ միայն դուրս եկավ իր բնական սահմաններից և սկսեց միջամտել հարևան երկրների ներքին գործերին²⁷: Աշշուր-ուբալլիտ I-ը նույնպես «եղբայր» է անվանում Եգիպտոսի փարավոնին՝

- «1. Ն[ա]լպիսու[րի]իային՝ Մեծ արքային]
2. Եգիպտոսի արքային, **իմ՝ եղբորը**՝
3. Այսպես է ասում Աշշուր-ուբալլիտը, Ասորեստանի արքան,
4. Մեծ արքան՝ **քո եղբայրը**»²⁸:

Հետաքրքիր է նաև KUB 21.38²⁹ բովանդակությունը, ուղարկված Խաթաթի արքա Խաթաթուսիլիս III-ի այրի՝ Պուդուխեսպա թագուհու կողմից՝ Եգիպտոսի փարավոն Ռամզես II-ին (մ.թ.ա. 1279-1213 թթ.)՝

«(O³⁰) Այսպես է ասում Պուդուխեսպան, Մեծ թագուհին, թագուհին Խաթաթի երկրի. ասա Ռեամաշեշային, Մեծ արքային, Եգիպտոսի երկրի արքային՝ **իմ եղբորը**»³¹:

Պահպանվել է նաև Ռամզես II-ի նամակը Պուդուխեսպային, որտեղ փարավոնը թագուհուն «քույր» է անվանում³²:

²⁶ Mynářová 2007: EA № 33; Moran 1992: EA № 33, ինչպես նաև՝ N^oN^o 34, 35, 37-40, և այլուր:

²⁷ Տականյան 2014, 237:

²⁸ Mynářová 2007: EA № 16, p. 190; Moran 1992: EA № 16.

²⁹ Նամակի վերականգնման համար տե՛ս Hoffner 2009: 281.

³⁰ Տողի հավանական վերակազմություն համար տե՛ս Hoffner 2009: 281.

³¹ Beckman 1996: № 22E; Hoffner 2009: № 98.

³² Beckman 1996: № 22F.

Բավականին վնասված KUB 26.91՝ տեքստի համաձայն՝ Ախիսիյավայի արքան իրեն հավասարագոր է դասում Խաթթիի արքային՝

«(1) Այսպես է ասում [...], մեծ արքան, արքան Ախիսիյավա երկրի. Ասա [...], մեծ արքային, Խաթթիի երկրի արքային՝ **իմ եղբորը**»³³:

Հայտնի է նաև, որ պարբերական նամակագրական կապի մեջ են եղել նաև Եգիպտոսի թագուհի Նապտերան (Նեֆերտարի) և Խաթթի թագուհի Պուդուխեպան: Վերջիններս իրար դիմում էին որպես «քույրը-քրոջը»՝

«Եգիպտոսի Մեծ թագուհի Նապտերանի (Նեֆերտարի) ասում է. «Ասա իմ քրոջը Պուդուխեպային, Խաթթիի Մեծ թագուհուն: Ես, քո քույրը նույնպես լավ եմ»³⁴:

Սակայն միջազգային հարաբերությունների կտրուկ շրջադարձի պայմաններում՝ միշտ չէ, որ այսպիսի «ընտանեկան» վերաբերմունքը պահպանվում էր: Միտտանիի արքա Վասաշատան այլևս չկարողանալով դիմակայել օր-օրի հզորացող և դեպի արևմուտք ծավալվող Աշշուրի տիրակալների գործողություններին՝ փրկության ելքը տեսնում է իր նախկին հակառակորդ Խաթթիի գերիշխանության ընդունման մեջ: Բնականաբար՝ դրանից հետո նրանց «եղբայրական» հարաբերությունների հորիզոնական առանցքը պետք է վերափոխվեր «հոր և որդու» կամ «տիրոջ և ծառայի» ուղղաձիգ առանցքով:

Խաթթիի արքա Մուվաթալլիս II-ը կամ Մուրսիլիս III-ն (Ուրխի-Թեշշուր) էլ իր հերթին՝ հրաժարվում է «եղբայր» անվանել Ասորեստանի արքա Ադադ-նիրարի I-ին (մ.թ.ա. 1295-1264 թթ.) նշելով, որ իր պապն ու հայրը նրա նախորդներին «եղբայր» չեն անվանել և, որ իրեն բարկացնում է

³³ Hoffner 2009: № 99, 291.

³⁴ Beckman 1996: № 22B.

Ասորեստանի արքայի կողմից նման վերաբերմունքը³⁵:

Հին մերձավորարևելյան պաշտոնական վավերագրերում բազմաթիվ են նաև փեսա և աներհայր երկու հավասարազոր արքաների փոխադարձ դիմելաձևերի օրինակները: Հայտնի է, որ Միտտանիի արքա Արտադամա I-ի դուստրը կնության էր տրված Եգիպտոսի փարավոն Թութմոս IV-ին, Շուտտարնա II-ի դուստր Գիլուխեպան՝ Ամենհոտեպ III-ին, իսկ Թուշրատտա I-ի (մ.թ.ա. 1350-1325 թթ.) դուստր Տադուխեպան՝ Ամենհոտեպ III-ին, ապա Ամենհոտեպ IV-ին, Խաթթիի արքա Խաթուսիլիս III-ի դուստր Մաաթորնեֆերուան՝ Ռամզես II-ին³⁶, Աշշուր-ուբալլիտ I-ի դուստր Մուբալլիտատ-շերուան կնության էր տրված Բաբելոնիայի արքա Բուրնա-Բուրիաշ II-ին, և այլն:

Գիտենք նաև, որ միջդինաստիական ամուսնությունների ավանդույթը հարատևել է, և այդ պրակտիկան լայնորեն կիրառվել է նաև Աքեմենյան Իրանում, Հելլենիստական աշխարհում, և մասնավորապես Պտղոմեոսյան Եգիպտոսի ու Սելևկյան տերության միջև և այլն:

Բերենք սակայն մի օրինակ, որտեղ Միտտանիի արքա Թուշրատտա I-ը դիմում է Եգիպտոսի փարավոն Ամենհոտեպ IV-ին՝

«1. [Նիմ]մոտեային, [Միծրիի] արքային՝ **իմ եղբորը, իմ փեսային,**

2. [ում ես ս]իրում եմ և ով սիրում է ինձ:

3. Այսպես է ասում Թուշրատտան, Միտտանիի արքան, **քնաներհայրը,**

³⁵ Hoffner 2009: № 104.

³⁶ Bryce 2003: 105; Dodson, Hilton 2004: 142f., 146, 155, 157, 171; Liverani 2014: 292f.; Oppenheim 1967: 61f.: Միջդինաստիական ամուսնությունների համար տե՛ս նաև՝ Houwkin 1996: 40-75.

4. [ով ս]իրում է քեզ, **քո եղբայրը ...**»³⁷.

Այս տեքստը լավագույնս է ներկայացնում երկու իրավահավասար արքաների միջև հարաբերությունը: Դժվար կլիներ պատկերացնել, և անկախ արքաների տարիքից, որ Թուշրատտա I-ը փարավոնին դիմեր որպես որդու, փոխարենը Միտտանիի արքան հանդես է գալիս որպես նրբանկատ և խոհեմաբար դիմում որպես «եղբոր» և շեշտում, որ միաժամանակ նա իր դստեր ամուսինն է դիմելով որպես «փեսայի»: Այս էլ այն դեպքում, երբ ինչպես արդեն նշվեց՝ Թուշրատտա I-ի դուստր Տադուխեպան սկզբնապես կնության էր տրված Ամենհոտեպ III-ին և վերջինիս մահից հետո, ամենայն հավանականությամբ, համալրել էր Ամենհոտեպ III-ի որդի Ամենհոտեպ IV-ի կանանոցը³⁸:

Նույն տրամաբանությամբ՝ դժվար կլիներ պատկերացնել, որ Բաբելոնի արքա Բուրնաբուրիաշ II-ին, որի դուստրը Խաթթիի արքա Սուպպիլուլիումաս I-ի կինն էր, և ավելի ուշ շրջանից՝ Նաբուգոդոնոսոր II-ը (մ.թ.ա. 605-562 թթ.), որն ամուսնացած էր Մարաստանի արքա Կիաքսարի (մ.թ.ա. 625-585 թթ.) դուստր Ամիտիդայի և միաժամանակ եգիպտական արքայադստեր՝ Նիտոկրիսի հետ, Հայոց արքա Տիգրան II Մեծը (մ.թ.ա. 95-55 թթ.) Պոնտոսի արքա և իր աներիայր Միհրդատ VI Եվպատորին (մ.թ.ա. 111-63 թթ.), կամ Պարթևստանի արքայից արքա և Տիգրան II Մեծի փեսա Միհրդատ II-ը (մ.թ.ա. 123-87 թթ.) դիմեին որպես «հոր» և «տիրոջ»: Սակայն, ներկայացվող որևէ երկրի արքային որպես «եղբայր» կամ նրա ընտանիքի անդամներին ինչպես «քույր», «որդի» կամ «դուստր» դիմելը՝ չպետք է ընկալել որպես ինքնին հասկանալի և տրամաբանական երևույթ, այն

³⁷ Mynářová 2007: EA № 20; Moran 1992: EA № 20, ինչպես նաև՝ N°N° 21, 23, 24, 27-29, և այլուր:

³⁸ Bryce 2003: 75.

դեռ պետք էր վաստակել: «եղբայրը - եղբորը» դիմելաձևի պարագայում, ինքնին արդեն հասկանալի է դառնում, որ տվյալ արքան արդեն ձեռք էր բերել «մեծ արքայի» կարգավիճակ, դեռ ավելին՝ «եղբայրության» համար անհրաժեշտ էր նաև կարգավիճակի իրավահավասարություն³⁹:

Դիվանագիտական էթիկետի այս նորմը, ինչպես երևում է, հարատևել է նաև հետագայում. այսպես էին միմյանց դիմում հելլենիստական միապետերը⁴⁰, իսկ ավելի ուշ՝ նաև Պարսից Սասանյան արքաներն ու հռոմեական կայսրերը⁴¹:

«Հայր-որդի», «տեր-ծառա», «աստված-երկրպագող»

Ի տարբերություն վերոնշյալ իրավահարաբերության՝ «**հայր-որդի**» դիմելաձևն արդեն իսկ ուրվագծում է ուղղահայաց մի հարաբերություն, որտեղ խիստ պարզորոշ է առա-

³⁹ Նույն տեղում 75.

⁴⁰ Бикерман 1985: 180, прим. 474; Սելևկյան պետության արքաներ Ալեքսանդր I Բալասը և Դեմետրիոս II Նիկատորը «եղբայր» էին անվանում Հովնաթան Մակարայեցուն՝ I Մակարայեցիներ, 10:18; II Մակարայեցիներ, 11:30:

⁴¹ Аммиан Марцеллин 2005: XVII. 5. 3.՝ Պարսից Սասանյան տերության արքայից արքա Շապուհ II-ը (309-379 թթ.) «եղբայրական» ողջույն է հղում Հռոմի կայսր Կոստանդիանոս I Մեծին (306-337 թթ.)՝

«Ես, արքայից արքա, աստղերին էակից Շապուհս, Արեգակի և Լուսնի եղբայրը, ողջույն եմ հղում իմ եղբորը՝ Կոստանդիոս Կեսարին»:

Կոստանդիանոս I Մեծ կայսրը եղբայրական դաշինք է կնքում Հայոց արքա Տրդատ III Մեծի (298-330 թթ.) հետ՝

«Սոյնպէս եւ արքային Տրդատայ, իբրեւ եղբայր սիրելոյ, սէր ցուցեալ ուրախութեամբ մեծաւ, մանաւանդ վասն աստուածածանաւթութեան նորա՝ առաւել դաշինս կռէր ընդ նմա...»՝ Ագաթանգեղայ 1983, ՃԻԶ, 877:

Նույն կերպ՝ Շապուհ II-ը եղբայր է անվանում Հայոց Տիրան արքային (338-350 թթ.).

«Մազդեզանց քաջ եւ բարձակից արեգական Շապուհ արքայից արքայ. ի բարոջ մերում յիշեալ եղբայր սիրելի Տիրան Հայոց արքայ. ողջոյն շաւր»՝ Մովսէս Խորենացի 1913, III. Ժէ:

ջինի գերակա իրավունքը վերջինի նկատմամբ⁴²: Այսպես՝ Խաթթիի արքա Սուպպիլուլիումաս I-ի և Հայասայի արքա Խուկկանայի միջև կնքված պայմանագրում նշված է.

«1-5) Այսպես (ասում է) Արևս՝ Սուպպիլուլիումասը, Խաթթիի արքան: Տե՛ս, քեզ՝ Խուկկանայիդ, շարքային հերոսիդ⁴³ ... ընտրեցի և քրոջս քեզ կամովին կնության տվեցի»⁴⁴:

«8-11) Դու, Խուկկանա՛, միայն Արևիս կամովին պիտի ճանաչես որպես տեր: Եվ որդուս, ում Արևս կասեմ՝ «Բոլորդ սրան պիտի ճանաչեք»: Եվ նրան կընտրեմ, դու, Խուկկանա, նրան ճանաչ[ի՛ր]»⁴⁵:

Մակեդոնիայի արքա Լիսիմաքոսը (մ.թ.ա. 285-281 թթ.) ցանկանալով օգնել Անտիպատրոսին՝ Եգիպտոսի արքա Պտղոմեոս I Սոտերի (մ.թ.ա. 305-282 թթ.) անունից նամակ է ուղարկում Էպիրոսի արքա Պյուռոսին (մ.թ.ա. 296-272 թթ.)՝ կոչ անելով դադարեցնել պատերազմը: Վերջինիս համար ոչ մի դժվարություն չի առաջանում կեղծիքը բացահայտելու համար, քանզի նամակում ընդունված «**հայրը ողջունում է որդուն**» արտահայտության փոխարեն գրված էր. «*Պտղոմեոս արքան ողջունում է Պյուռոս արքային*»⁴⁶:

Երկու արքաների միջև ուղղաձիգ հարաբերություն էր պարունակում նաև «տեր - ծառա», «աստված - հեղևորդ» դիմելաձևերը: Այսպես, օրինակ, Եգիպտոսի փարավոնին արդեն թուլացած Միտտանիի արքա Տեխու-Թեշշուբը տեր է կոչում, իսկ իրեն ծառա անվանում⁴⁷: Խաթթիի արքա Խա-

⁴² Մանասերյան 1997, 81: Մեկիբյան 2008, 35:

⁴³ Խուկկանայի այսպիսի կարգավիճակի համար տես՝ Քոսյան 2016, 42:

⁴⁴ Քոսյան 2016, ԴԿ I, §1, 20-21; Beckman 1996: № 3, §1, 23.

⁴⁵ Քոսյան 2016, ԴԿ I, §2, 20-21; Beckman 1996: № 3, §2, 23.

⁴⁶ Плутарх 1990: Пирр, VI.

⁴⁷ Moran 1992: EA № 58.

թուսիլի I-ը *ծառա* է անվանում Տուկանիայի արքա Տունիային (Տունիպ-Թեշշուբին)⁴⁸

«(1-3) Ասա Տունիային, իմ **ծառային**. այսպես է ասում Լաբարանան, Մեծ արքան. (4-7) **Դու իմ ծառան ես**»⁴⁸:

Նույն կերպ են դիմում նաև հռոմեական կայսրերը Հայոց արքա Տիրանին ու նրա հաջորդին՝ Արշակ II-ին՝

«Ինքնակալ Յուլիանոս, ծնունդ Ինարայ, Արամազդայ որդի, և ճակատագրեալ յանմահութիւն. Տիրանայ մերում գործակալի խնդալ»⁴⁹, և

«Արշակ արքայ Հայոց Մեծաց և ամենայն նախարարք Արամեան ազգիս. փեսոն մերում ինքնակալի Վաղեսի Ալգոստոսի և որդոյ քում Գրափիանոսի՝ խնդալ»⁵⁰:

«**Աստված - հեղինորդ**» դիմելաձևի վառ օրինակ է Հռոմում՝ բազմության առջև Տրդատ Արշակունու ելույթը ուղղված Ներոն կայսեր՝

«Ես, ո՛վ վեհապետ, Արսակեսի հեղինորդն եմ, Վոլոգեսոս և Պակորոս թագավորների եղբայրը, **իսկ քո՛ ծառան**: Ու եկել եմ ես դեպի քեզ, **իմ աստծուն, երկրպագելու քեզ**, ինչպես Միթրային, և թող ինձ համար կատարվի այն, ինչ դու ինքդ կկամենաս. քանզի դու ես իմ վիճակը և իմ բախտը»⁵¹:

Հռոմեացի պատմիչը նշում է նաև Ներոն կայսեր պատասխանը Տրդատին՝

«... և այն ամենը, ինչ ոչ քո հայրը քեզ ժառանգություն թողեց, ոչ ևս քո եղբայրները քեզ փալուց հետո պահպանեցին, ես բոլորը քեզ պարգևում եմ և դարձնում Հայաստանի թագավոր, որպեսզի թե՛ դու և թե՛ նրանք հասկանաք,

⁴⁸ Hoffner 2009: 2.1, 77f.

⁴⁹ Մովսէս Խորենացի 1913, III, ԺԵ:

⁵⁰ Նույն տեղում, III, ԻԹ:

⁵¹ Դիոն Կասիոս, 1976, LXIII, 5.2-3:

թե ես կարող եմ թագավորությունները և՛ վերցնել, և՛ պարզևել»⁵²:

Տիգրանակերտի արձանագրության մեջ Հայոց Տրդատ III արքան, բացի իրեն արքա օժաժ Դիոկլետիանոս կայսրից (284-305 թթ.)՝ երեք անգամ «աստված» է կոչում նաև արքայից արքա Ներսեհին (293-302 թթ.)՝ որի նկատմամբ վասալական պարտավորություններ էր հանձն առել՝ Հայաստանի պարսկահպատակ մասի կառավարումը ստանձնելով⁵³:

Ա. Մելիքյանը նշում է, որ I-ից մինչև IV դ. սկզբները հայոց արքայի (կախյալ արքաների) կողմից հռոմեական կայսերն «աստված» կոչելը սովորական դարձած երևույթ էր, որն արտահայտում էր նրանց ստորադաս վիճակը վեհապետի հանդեպ: Միաժամանակ հեղինակը ուշադրություն է հրավիրում այն փաստին, որ այդ ամբողջ ընթացքում Իրանի արքաների հետ հայոց արքաները հարաբերվում էին որպես «եղբայր», այսինքն՝ իբրև իրավահավասար կողմ: Այս տարբերությամբ արտահայտվում էր մեկից հայոց արքայի իրավաքաղաքական կախումը, մյուսից՝ կատարյալ սուվերենությունը⁵⁴:

Այսպիսով, Հին Մերձավոր Արևելքի պաշտոնական վավերագրերից քաղած վերոնշյալ միջպետական (միջարքայական) հարաբերությունների մեջ պաշտոնական դիմելածը ամենուրեք և անկախ պատմական ժամանակից, ունեցել է հստակ քաղաքական բովանդակություն: Այն մշտապես համապատասխանել է հարաբերվող արքաների իրավաքաղաքական կարգավիճին: Եթե այն եղել է հավասարազոր, ապա հարաբերությունն էլ կայացել է հորիզոնական առանցքի շուրջ՝ ինչպես «եղբայրը եղբորը»:

⁵² Նույն տեղում, LXIII, 5.3:

⁵³ Մելիքյան 2008, 141:

⁵⁴ Նույն տեղում, 141:

Դրան հակառակ՝ վեհապետի ու վասալի հարաբերությունները մշտապես կառուցվել են ուղղաձիգ սկզբունքով և, համապատասխանաբար, նրանց պաշտոնական դիմելաձևն էլ ձևակերպվել է «հոր» և «որդու», «տիրոջ» և «ծառայի», «աստծու» և «երկրպագողի» ձևաչափով:

Ձևական տարբերություններն այստեղ արդյունք են ընդամենը այն բանի, որ առաջին և երկրորդ դեպքերում ուղղահայաց հարաբերությունը դիտարկված է ընդհանրի օրինակով, երրորդ դեպքում՝ հավատո հարաբերությունների:

Կասկածից վեր է, որ Ասորեստանը անհաղորդ չի եղել Հին Մերձավոր Արևելքում դարերով կենցաղավարած քաղաքական մշակույթին ու նրա՝ վերը քննարկված էթիկետային տարրին: Վերջինս, ինչպես տեսանք վերը բերված օրինակներում, միջպետական հարաբերություններում բավականին առանցքային նշանակություն ուներ և, հետևաբար, Ասորեստանը, կամա թե ակամա, այն պետք է ընդուներ՝ հավասարազոր և հպատակ քաղաքական սուբյեկտների հետ իր հարաբերությունները կառուցելու համար: Այս տեսանկյունից կատարելապես բացառվում էր, որ Աշշուրբանիպալն իր «Տարեգրության» մեջ օգտագործեր քննարկված եզրույթները սոսկ ինքնախառաքանման նկատառումով:

Ամփոփում

Ելնելով մ.թ.ա. VII դարի ասսուրա-ուրարտական դիվանագիտական, հարաբերությունների ընդհանուր օրինաչափությունից՝ կարելի է եզրակացնել, որ քաղաքական գերծանր պայմաններում գահ բարձրացած Սարդուրին Ուրարտուի փրկության ելքը տեսել է Ասորեստանի հովանավորության և աջակցության մեջ և դրա ակնկալությամբ դեսպանության միջոցով Ասորեստանին հավաստել է իր հպատակությունն ու հավատարմությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ագաթանգեղայ 1983, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանանյանցի, աշխ. թարգմ. և ծանոթ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան:

Ադոնց Ն. 1972, Հայաստանի պատմություն, Ակունքները X-VI դդ. մ.թ.ա., Երևան:

Գրեկյան Ե. 2008, Կինն Ուրարտուում. Ուրարտուի թագուհիները: Շնորհի ի վերուստ, առասպել, ծես և պատմություն, հողվածների ժողովածու նվիրված Սարգիս Հարությունյանի 80-ամյակին, 292-307:

Գրեկյան Ե. 2013, Ասորեստանը Ք.ա. VIII-VI դդ., Հայաստանի հարակից երկրների պատմություն, հ. 1: Հին շրջան, պատասխանատու խմբագիր՝ Ա. Վ. Քոսյան, Երևան, 80-98:

Դիոն Կասիոս 1976, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, № 9, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան:

Մանասերյան Ռ. 1997, Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ, Երևան:

Մելիքյան Ա. 2016, Սալմաստի ժայռաքանդակը (Պատմական Հայաստանի Սասանյան մի հուշարձանի վերամեկնաբանություն), Երևան:

Մելիքյան Ա. 2008, Տիգրանակերտի հունարեն արձանագրության ժամանակի և նշանակության մասին, Բանբեր. Գիտական աշխատություններ, № 3, Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ, Վանաձոր, 2008, էջ 132-144:

Մովսէս Խորենացի 1913, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Տիֆլիս:

Յականյան Ռ. 2014, Ասորեստանի պատմության պարբերացման հարցի շուրջ, Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ, № IX-X, էջ 229-246:

Յականյան Ռ. 2018, Էթնոքաղաքական տեղաշարժերը Մերձավոր Արևելքում և Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. VII-VI դդ., Երևան:

- Քոսյան Ա.** 2016, Մ.թ.ա. XIV դարի խեթա-հայաստանյան միջ-
պետական պայմանագրերը, Երևան:
- Аммиан Марцеллин** 2005: Римская история. Пер. с лат. Ю.
Кулаковского и А. Сонин, Москва.
- Арутюнян Н. В.** 1970: Биайнили (Урарту), Военно-
политическая история и вопросы топонимикы, Ереван.
- Арутюнян Н. В.** 1976: Некоторые вопросы последнего периода
истории Урарту, Древний Восток, № 2, с. 98-114.
- Бикерман Э.** 1985: Государство Селевкидов, Москва.
- Дьяконов И. М.** 1951: Ассиро-вавилонские источники по
истории Урарту, Вестник древней истории, № 3, с. 205-252.
- Меликишвили Г. А.** 1954: Наири-Урарту, Тбилиси.
- Плутарх** 1990: Избранные жизнеописания в двух томах. Т. 1,
Москва.
- Beckman G. M.** 1996: Hittite Diplomatic Texts, Atlanta.
- Borger R.** 1996: Beiträge zum Inschriftenwerk Ashurbanipals, Die
Prismenklassen A, B, C = K, D, E, F, G, H, J, und T sowie andere
Inschriften, Wiesbaden.
- Brinkman J. A.** 1984: Prelude to Empire. Babylonian Society and
Politics, 747-626 B.C., Philadelphia.
- Bryce T.** 2003: Letters of the Great Kings of the Ancient Near East.
The Royal Correspondence of the Late Bronze Age, London - New York.
- Dodson A., Hilton D.** 2004: The Complete Royal Families of
Ancient Egypt, Thames and Hudson.
- Frame G.** 1982: Another Babylonian Eponym, Revue d'Assyriologie
et d'Archéologie Orientale, № 76, 157-166.
- Fuchs A.** 2012: Urartu in der Zeit, BIAINILI-URARTU, The
Proceedings of the Symposium held in Munich 12-14 October 2007, Ed. by
S. Kroll, C. Gruber, U. Hellwag, M. Roaf & P. Zimansky, Peeters, 135-161.
- Grayson A. K.** 1981: The chronology of the reign of Asurbanipal,
Zeitschrift für Assyriologie und Vorderasiatische Archäologie, № 70, 226-
254.
- Harper R. F.** 1913: Assyrian and Babylonian Letters Belonging to
the Kouyunjik Collections of the British Museum, Part XII, Chicago.
- Hellwag U.** 2012: Der Niedergang Urartus, BIAINILI-URARTU,
The Proceedings of the Symposium held in Munich 12-14 October 2007,
Ed. by S. Kroll, C. Gruber, U. Hellwag, M. Roaf & P. Zimansky, Peeters,
227-241.
- Hoffner Jr. H. A.** 2009: Letters from the Hittite Kingdom, Writings
from the Ancient World, Society of Biblical Literature, № 15, Atlanta.

- Houwkin ten Cate** 1996: Dynastic Marriages of the Period between ca. 1258 and 1244 B.C., *Altorientalische Forschungen*, № 23/1, 40-75.
- Lanfranchi G. B.** 2009: A Happy Son of the King of Assyria: Warikas and the Çineköy Bilingual (Cilicia) // in Luukko, M., Svärd, S. and Mattila, R. (eds.), *Of God(s), Trees, Kings, and Scholars: Neo-Assyrian and Related Studeis in Honour of Simo Parpola*, *Studia Orientalia* 106, Helsinki, 2009
- Luckenbill D. D.** 1927: *Ancient Records of Assyria and Babylonia*, Vol. 2, Chicago.
- Moran W. L.** 1992: *The Amarna Letters*, Baltimore and London.
- Mynářová J.** 2007: *Language of Amarna – Language of Diplomacy: Perspectives on the Amarna Letters*, Prague.
- Na'aman N.** 1991: Chronology and History in the Late Assyrian Empire (631-619 B.C.), *Zeitschrift für Assyriologie und Vorderasiatische Archäologie*, № 81, 243-267.
- Oppenheim Leo A.** 1967: *Letters from Mesopotamia*, Chicago-London.
- Parpola S.** 2018: *The Correspondence of Assurbanipal, Part I: Letters from Assyria, Babylonia, and Vassal States*, *State Archives of Assyria*, XXI, Helsinki.
- Reade J.** 1998: Assyrian Eponyms, Kings and Pretendersm 648-605 BC., *Orientalia*, № 67/2, 255-265.
- Roaf M.** 2010: Thureau-Dangin, Lehmann-Haupt, Rusa Sardurihi and Rusa Erimenahi, *Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies*, № V/1, 66-82.
- Salvini M.** 1995: *Geschichte und Kultur Urartäer*, Darmstadt.
- Salvini M.** 2007: Argišti, Rusa, Erimena, Rusa und die Löwenschwänze. Eine urartäische Palastgeschichte des VII Jh. v. Chr., *Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies*, № II, 146-162.
- Streck M.** 1916: *Assurbanipal und die letzten assyrischen Könige bis zum Untergang Nineveh's*, Teil II, Leipzig.
- Waterman L.** 1930: *Royal Correspondence of the Assyrian Empire. Translation and transliteration*, Part II, Ann Arbor.

Ռուսլան Յականյան - պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ
արևելագիտության ինստիտուտ, Հին Արևելքի բաժին,
գիտաշխատող,
 ruslantsakanyan@rambler.ru

A SAMPLE OF MANIFESTATION OF ROYAL SUBORDINATION IN RELATIONSHIP BETWEEN ASSYRIA AND URARTU

Keywords: *Equality, God, Lord, servant, brother, son, Egypt, Hatti, Mittani, Assyria, Urartu.*

According to the "Chronicle" (Cylinder A, Col. X, ll. 40-50) of the Assyrian king Ashurbanipal (669-627 B.C.) in 647-637 B.C., he was received the ambassadors of the king of Urartu Ishtarduri/Issarduri/Sarduri III (IV (?)) (645-635(?) B.C). In the Chronicle, Ashurbanipal notes that earlier the Urartu kings sent him ancestors fraternal greetings, and now Sarduri "*kîma ša DUMU (mâru) ana AD-šú (abûšu)*" - "*as a son to his father*" constantly writes "*lu šulmu-mu ana LUGAL (šarri) EN-ia (bêliya)*" - "*to the King, my Lord*" and presents gifts. By means of evidence from similar Ancient Near Eastern and Ancient Diplomatic Sources, the problem of the status of the Urartu State and the King is investigated.

Based on the fact in the above inscription of Ashurbanipal, as well as from many similar Parallels in Ancient Near Eastern lithographic sources and in Interstate relationship - it is clearly seen that the mutual appeal of the two rulers as "*brother to brother*" was peculiar to absolutely independent States. Meanwhile, here the vertical "*father-son*" relationship of the sovereign over the vassal takes place, which are formed mainly by force and coercion.

This crucial change in diplomatic etiquette demonstrates the voluntary donation of the political sovereignty of the State of Urartu.

Ruslan Tsakanyan - *PhD, Institute of Oriental Studies NAS
RA, Department of Ancient Orient, Researcher,
ruslantsakanyan@rambler.ru*